

ՔՍԱՆՎԵՏԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբ.  
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.  
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.  
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը քաղ է առաւօտեան 10—2 ժամ  
(քաղի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւններ համար վճարում են  
խրաքանչիւր բառին 2 կոպէկ.  
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՎԱՅ 1899 ԹԻՎԱԿԱՆԻ

## ՄՇԱԿ

(27-րդ ՏԱՐԻ)

### ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱՅԻՐԻ

«ՄՇԱԿ» ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. և մի ամսականը՝ 1 ռուբլի:  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ա մ ե ռ ի կ ա յ ի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 ռուբլի. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻ» գրվել է արեւելի է ԽՐԱՎԱՐԱՏԱՆԸ (Բաղրամյայ և Բարսեղյայ փողոցների անկիւնը):

Կարողութեան ուրիշ բաղադրիչը «ՄՇԱԿԻ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելու, պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ»; իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Զ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Ս

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1899 ГОДЪ

(Пятьдесят четвёртый годъ изданія)

На газету

## „КАВКАЗЪ“.

Съ 1-го января 1897 года „КАВКАЗЪ“ выходитъ подъ редакціей

В. Л. ВЕЛИЧКО.

Въ 1899 году газета будетъ издаваться по той-же программѣ, какъ и въ прошломъ году.

Отдѣлъ телеграммъ отъ нашего столичнаго корреспондента, какъ это, вѣроятно, замѣчено читателями, значительно расширенъ.

Подписная цѣна остается безъ измѣненія, а именно:

| Съ доставкою въ Тифлисъ:       | Съ пересылкою иногороднымъ: | По почтовому оному:           |
|--------------------------------|-----------------------------|-------------------------------|
| На годъ . . . . . 11 р. 50 к.  | На годъ . . . . . 13 р. —   | На годъ . . . . . 18 р. 40 к. |
| „ 1/2 года . . . . . 6 р. — к. | „ 1/2 года . . . . . 7 р. — | „ 1/2 года . . . . . 10 р. —  |
| „ 3 мѣс. . . . . 3 р. 50 к.    | „ 3 мѣс. . . . . 4 р. —     | „ 3 мѣс. . . . . 6 р. —       |
| „ 1 мѣс. . . . . 1 р. 50 к.    | „ 1 мѣс. . . . . 1 р. 75 к. | „ 1 мѣс. . . . . 2 р. —       |

Разсрочка допускается для годовыхъ подписчиковъ по соглашенію съ редакціей, при чемъ иногороднымъ вносятся по 3 руб.: при подпискѣ, 1-го марта и 1-го мая и по 2 руб. — 1-го іюля и 1-го сентября; городскимъ въ тѣ же сроки: 3 р., 2 р., 2 р. и 1 р. 50 к.

Контора „Кавказа“, во избѣжаніе недоразумѣній, проситъ гг. иногородныхъ подписчиковъ точно опредѣлять въ случаѣхъ высылки денегъ менѣе 13 рублей (цѣна годовой подписки), желаютъ ли они получать газету въ разсрочку, или на сроки, соответствующіе присылаемымъ суммамъ.

NB. Подписка и объявленія принимаются по нижеслѣдующему АДРЕСУ:

Г. Тифлисъ, Эриванская площадь, домъ Харазовой.

Тамъ-же принимается подписка на телеграммы „Россійскаго телеграфнаго агентства“.

Плата за объявленія (со строки пегита или занимаемаго ею мѣста). На послѣднюю страницу: съ мѣстныхъ объявленій (кавказскихъ) — 8 коп., съ прочихъ — 10 коп. за каждый разъ. На первыя страницы — вдвое. За большія или многократныя объявленія по соглашенію. За разсылку особымъ приложеніемъ 10 рублей съ тысячи.

#### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրութեան կողմից. Զուր չէինք աշխատում. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մոռացված գործիչ. Հայոց ներկայացուցիչները Բագրում. Նամակ Մոսկվայից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նոր տարին եւրոպայում. Թիւրքական նոր ձեռնարկութիւններ. Նամակ Գերմանիայից. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

#### ԽՐԱՎԱՐԱՏԱՆ ԿՈՂՄԻՑ

«Մշակը» այսօրվայ համարով փակում է իր գոյութեան ըստիւյններով տարեշրջանը: Քառորդ դարը մի լրագրի համար բաւականաչափ ժամանակամիջոց է իր հաստատու և որոշ կերպարանքը ընթերցող հասարակութեան ցոյց տալու համար: Այդ անուրանալի է մանասանդ «Մշակի» պէս մի լրագրի վերաբերմամբ, որ միշտ, առանց

տատանումների գնացել է մի յայտնի ճանապարհով: Այնպէս որ, վերջացնելով մի տարեշրջանը, մենք նորանոր խոստումներ չենք անի մեր ընթերցողներին, բայց նրանից, որ ոչ մի ջանք չենք խնայի, որպէս զի «Մշակը» ապագայում էլ լինի այն, ինչպէս ձանաչում է նրան հայ հասարակութիւնը բանահինգ երկար տարիների ընթացքում:

«Մշակի» խմբագրութիւնը համոզված է, որ «Մշակի» անմոռանալի հիմնադրի ստեղծած ուղղութիւնը մեր նորաշրջան կեանքի մէջ կատարել է իր ահապէն դերը և դեռ պիտի շարունակէ այսուհետեւ էլ կատարել: Ոգեւորված այս ճշմարտութեամբ, մենք գիտում ենք ապագային, ոչ մի կականջ չունենալով, որ մեզ հետ է հասարակութեան լուսադոյն մասի համակրանքը: Հիմնական ուղղութեան տեսակէտից մագիւ չափ չը շեղվելով «Մշակի» տարիներով հարթած ճա-

նապարհից, մենք պէտք է ի նկատի ունենանք և այն հանգամանքը, որ մեր ժողովրդի մէջ հետզհետեւ տարածվում է ընթերցասիրութեան պահանջը և այդ պահանջը պիտի լրացնէ ամենօրեայ լրագրի: Մեզ համար պարտք էր համարենք մեր ոյժերը ներածին չափ կատարել այն, ինչ պահանջվում է մեզանից. և հաւատացած ենք, որ հասարակութեան էլ այնքան պարտաճանաչութիւն կունենայ, որ չի զրանայ իր աջակցութիւնը: Նրուանք պարտաճանաչութիւն — այս պիտի լինի մեր պահանջը: «Մշակը» երբեք ուրիշ պահանջ էլ չէ ունեցել. և այժմ էլ նոյն կերպով նա դիմում է դէպի իր նոր տարեշրջանը:

#### ԶՈՒՐ ԶԵՆԻՔ ԱՇԽԱՏՈՒՄ

Ոչ թիւում ազգասիրութիւնը, որ շարունակ փրկում էր մեր շուրջը, ոչ մեր դրամի մի քանի հրապարակախօսների անմիտ և զգուշի գրգռումները չը կարողայան հանել մեզ մի անգամ ընդ միշտ ընտրած ձանապարհից, դաւաճանել այն ուղղութեան, որի նշանաբանն է համախմբել ազգութիւնները՝ ընդհանուր համար պարտադր առաջադիմական շարժման շուրջը: Ճարիներից ի վեր մենք կուզում էինք կրօնական և ցեղական նախապաշարմունքների, թշնամութիւնների դէմ, հարուածում էինք շփոխստական ներդրութիւնը: Մենք պարտք էինք համարում ոգեւորել մեր ընթերցողներին մեր դարի այն առաջադր հոսանքներով, որոնք մարդկութեան մէջ հրէայ կամ հեթանոս չեն որոնում, որոնք խորութիւնների խաւար թաղաւորութիւնն են ոչնչացրել:

Ոչ մի ազգ ազատ չէ պակասութիւններից, ոչ որ իրաւունք չունի երկրների ընտրելով համարվել: Բոլոր ազգութիւնները կարօտ են միայն մի բանի — առաջադիմութեան, լուսաւորութեան, այսինքն բարօրութեան: Մեր կոչումը մենք համարում էինք անկողմնապահ ինքնաբերականութիւնը. այդ ուղղութեամբ «Մշակը» մի ամբողջ սերունդ կրթեց: Թշնամի լինելով ազգային, համայնական կողմնացման, ջանք չը խնայելով ոչնչացնել չինական հասկացողութիւնները, մենք, բնականաբար, պիտի քարոզէինք ոչ միայն սովորել մեզանից կրթութեամբ և կուլտուրայով բարձր ազգերից, այլ և ուսումնասիրել մեր շրջապատը, մեզ հետ ապրող ազգութիւնները, սիրով և ուշադրութեամբ վերաբերվել նրանց կարիքներին ու ցաւերին, նոյնպէս և աշխից չը զգել նրանց մէջ տեղի ունեցող ամեն մի լուսաւոր, համակրելի երեւոյթ:

Այդպէս մենք կը սովորէինք հոյ պատրաստել միահամուռ գործակցութեան համար, այդտեղից պիտի գուրս գայ այն համերաշխութիւնը, առանց որի անհնարին է մի երկրի առաջադիմութիւնը:

Մենք կարող ենք պարծանքով և ուրախութեամբ յիշատակել, որ մեր այդ ջանքերը գուր չանցան: «Մշակի» գաւառական լրագրիցները տարիներից ի վեր սովորեցին հաւասար ուշադրութեամբ վերաբերվել թէ՛ տեղական հայ կեանքին և թէ՛ իրանց հարեան օտար ազգերին: Նկարագրել մեր դրացի ազգերի բարոյական վերաբերքը ոչ թէ չարախնդարութեամբ, ոչ թէ անմիտ սնապարծութեամբ, այլ անկեղծ ցաւակցութեամբ, իբրեւ բարեկամ, իբրեւ սրտացաւ, նոյնպէս մեծաբնէլ ամեն մի լուսաւոր, գեղեցիկ երեւոյթ, որ ուրախութիւն կարող է պատճառել մարդկութեան տեսակէտից — ահա՛ ինչ էինք կամենում մենք, և տեսնում ենք կատարված, կեանքի մէջ պահանջ դարձած:

Աւելորդ է բացատրել, թէ որքան բարե-

ւար է այդ տեսակ ուղղութիւնը: Մենք միայն կարող ենք հրաւեր կարդալ մեր ուղղութեան համակրողներին, որ նրանք աւելի ևս բազմապատկեն իրանց ջանքերը, աւելի մեծ ուշադրութիւն նուիրեն իրանց շրջապատող ազգերի կեանքին, տան մեզ այդ կեանքից փաստեր, որոնք արժանի են ուսումնասիրութեան և կարող են պատկերացնել մեր երկրի ընդհանուր կեանքը, այն դրութիւնը, որ տիրապետում է մեր ընդհանուր հասարակական և մտաւոր կացութեան վրա: Ունենալով անկեղծ սէր և բարեացակամութիւն դէպի մեր դրացիները, մենք կարող ենք անառաւորեամբ վերաբերվել նրանց պակասութիւններին, ինչպէս վերաբերվում ենք մեր սեփական ցաւերին ու կեղտերին, կարող ենք անխնայ հարուածել նրանց, մերկացնել, և ոչ ոք չէ կարող վերաւորանք զգալ մեր այդ ուղղութիւնից, քանի որ դրա մէջ մենք կը շարունակենք պաշտպանել մեր դրացիների մարդկային իրաւունքները, նրանց մտաւոր և բարոյական շահերը:

Ուրիշ ձանապարհ չը կայ առաջադիմութեան ճշմարիտ յաղթանակի համար: Նրանք, որոնք ազգայնական երկպառուութիւններ են գրգռում, թշնամի են թէ՛ իրանց ազգին և թէ՛ իրանց հայրենիքի բարօրութեան: Թող տանք, որ այդպիսի խաւար ոյժերը ծիծաղելի եռանդով ջանքեր հանդիսանալու: Առաջադիմող մարդկութիւնը կանգ առնել չէ կարող և նրա թշնամիները գուր միայն քրտինք են թափում: Արհամարհենք հակամարդկային գաղափարներ քարոզողներին, առաջ անցնենք, պիտի սեղմվելով այն գաղափարներին, որոնք արդէն ընդունված ճշմարտութիւններ են և գործադրվում են բարագործ կրթմարդկութեան մէջ, որ օրի վրա հրաշքներ արտադրելով ամբողջ մարդկութեան, ամբողջ աշխարհի բարօրութեան համար...

#### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

##### ՄՈՒՍԿՎԱՅ ԳՐՈՒԾԶ

... Затеряна давно твоя могилა  
И память благодарная друзей  
Дороги къ ней не проторила.

Н. А. Некрасовъ

##### II

Դէրոգ Ավերդեան, աւարտելով համալսարանական ուսումը և վերադառնալով Կովկաս փոխարքայի դիրանատան մտապետական կողմից, հարազատ իր հուժանորդ կրթութեան, գիտէր թէ ինչի վրա պիտի ուշադրութիւն դարձնել հարկեն երկրում: Ահա նա բարձրացնում է ժողովրդական կեանքի մի շատ հետաքրքիր և հրահանգիչ կողմի վարագոյրը և տալիս է համարներին՝ կապակցութեամբ ծնող, գեղեցիկ և ոգեւորված նկարագրութիւնը: \*

Իր պաշտօնական ճանապարհորդութիւնների ժամանակ նա ուսումնասիրում, ժողովում է յայտնի աշուղների երգերը, որոնց մտադիր է ժամանակով հրատարակել և այդ շարքի առաջին հատորը կազմում է Սայեաթ-Նովան, որի թովիչ մուսան նա ազատեց կորստից: Բայց թէ որքան հարուստ էր ժողովրդական երգչների նրա ժողովածուն, դա ցոյց է տալիս 39 աշուղների անունները, որ նա թուով է գրել առաջադրում (եր. գ):

Հրատարակելով Սայեաթ-Նովան բոլորովին դիտանկանօրէն (այդ տեսակ աշխատութիւն չունէ մենք մինչև այժմ), ժողովողը ահա ինչպէս է պարզում իր միտքը. «Կովի մէ քանի տարի հաւաքում իմ կենդանի աղբիւրի ցայ հանած կենդանի նրբեր ժամանակակից հայ աղբի

\*) Тифлиссіе амкары, изъ записокъ Юрія Оелоревича Ахвѣдова, Тифлисъ 1883 г. Եթէ չենք սխալվում, այդ աշխատութիւնը հայրենի չէ թարգմանված. գրքի առաջաբանում կայ անանուն հրատարակչի մի քանի կցկուտը տեղեկութիւններ Ախվերդեանի կեանքի մասին:



պատմութեան համար: Հաւաքելու ունէի միշտ աչքի տակ ինչորեք, թէ դէտուէն օտար ազգերու մէջ բնակած հայերն ինչպէս են ձևացրել իրանց կեանքն՝ մնալով այլազգի ազդեցութեան տակն, ու ամեն տեղ հետազոտութեամբ վեր առնելով նրանց սովորութիւններն. երբեմն լեզուն էլ յայտնում են արդեօք իրանց կենցաղավարութիւնում էնպէս թուն նշաններ, որը գոյացնում ըլլին ազգի սեփականութիւնն ու շնորհն (եր. ա):

Կենդանի նիւթերը բերին հասցրին հետազոտողին դաւաճաբարբառներն ուսումնասիրութեան, որի իբրեւ նմուշ առաջին անգամ նա տալիս է Քիֆլիսի բարբառի գիտնականօրէն մշակած բերականութիւնը, ուսումնասիրութիւն, որ պիտի պարզէր դրա բառի գոյացման գաղտնիքը: Փէ ուղեւանը վճռել էս ինչորեք, ասում է Ալիքերեան, պիտի մեծ գոռուլով զննենք մէմէկ զանազան դաւաճական բարբառներու կազմութիւնը, ամենն էլ իր խօսած տեղն, ու յետոյ գցենք սրանց բաղադրութեան ընտելութեան տակն. միայն այսպիսի խոստանքը բառազնունակն քննութիւնից ծագելու է մեզ համար լոյս առն: Եւքան ծանր աշխատութիւնն՝ թէ մեզ նըպաստակին էլ չը հասցնէ, անմեղ կորչելու է: քանի կենդանաբար ու պոզած ինչ վերականգնել կ'ուենենայ ընդունելու մեր հին գրականութեան լեզուի թմբած ոցն (եր. իա):

Նույնպէս յայտնի է, ճիշդ այս ծրագրով դաւաճաբարբառներն քննութեամբ զբաղված էր հանդուցեալ լեզուագէտ Սարգիս Սարգսեանց 80-ական թվականներին վերջին և այս անգամ էլ ուսումնասիրութիւնը մնաց անկատար...:

Մտնող աշխատութիւնից պարզ երևում է, որ հիշատակում է, այլ ընդունվին գիտնական օրէն ձգտում էր Ալիքերեան գրական նոր լեզուին, թմբած գրաբարի տեղ, և անս ինչու ամեն անգամ, երբ հարկաւոր էր լինում կրիտիկաբար հայեացք ձգել նոր լեզուի վրա, ուսումնասիրողը կարեւորութիւն էր դրում այդ լուրջ աշխատութեան մէջ (տես Մ. Նալբանդեանի նամակը, կպած Դաղար Փարբեցու թղթի թարգմանութեան. Պետերբուրգ, 1888 թ.):

Սայեաթ-Նուայի հրատարակութիւնը ճանապարհ պատրաստեց ուսման օրէն գրականութեան երկրորդ, հայ աշուղների երկերի հրատարակութեան, կորստից ապականով ժողովրդական ստեղծագործութեան շատ նիւթեր և նոյն իսկ գոյարեւել:

Մենք չենք կարող ասել, թէ Ալիքերեանից յետոյ կանգնած ենք եղել այս յարգելի գիտնական բժշկի ուսումնական տեսակէտի վրա ժողովրդական կեանքի և լեզուի վերաբերեալ, և հազիւ թէ նրա շաղկով լինեն ընթերցում այժմ հոգեւորաւոր աւելի ասպետները...:

Սա այդ տեսակ գործիչի մասին մեր գրականութեան մէջ ի դուր կորուսէր որ և է կենսագրական տեղեկութիւն, ուր մնաց հետազոտութիւն:

Շատ տարի առաջ Մովսիսյան, գրականութեամբ հետաքրքրվող մի շրջանում, մենք լսեցինք, որ հանգուցեալի ազգականներից մէկը պատրաստութիւն է տեսնում գրել նրա կենսագրութիւնը: Արդեօք երբ և ինչ գրուի կը գոյ այդ միտքը: Հումանիտար բժշկի ժամանակակից սակաւթիւ կենդանի վկաները անցնում գնում են, իսկ մենք ձեռքներս ծալած նստած ենք: Ա. կամայից յիշում ես նման դէպքից դառնացած բանաստեղծի ասածը, որ և մեզ՝ հայերիս էլ է կպչում. Мы живны и любопытны.

Պ. Զաքարեանց

Աւելի

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ ԲԱԳԻՌՈՒՄ

Իբերի այն անողորմելի դրութիւնը, որին ենթակայ է մեր ազգային ստեղծագործութիւնը և մտաւոր կեանքն ընդհանրապէս, դրած ունի իր կնիքը և հայկական բնի վրա Այստեղ ևս աշխարհիւնը և փայլուն երևոյթները պատահական են և անցողական ընդհանուր տիւր ֆօնի վրա: Չը նայած իր երկարատև գոյութեան, մեր բնած չը կարողացաւ լուրջ չկօտ առաջ բերել (ինչպէս մեր միւս գեղարուեստական ճիւղերը և մտաւոր ասպարէզները), և այս հանգամանքն շնորհիւ այնպիսի նշանաւոր ոյժեր, ինչպէս Ամբրիկեան, Աղաճան, Աստղիկ, Հրաչեայ և ուրիշ, ներ փայլեցին մեծօրէնքի նման և անհետացան առանց մի զգալի հետք թողնելու: մեր բնած զարգացման գործում: Եթէ հայկական ցեղը ապացուցանում է, որ ընդունակ է երբեմն արտասովոր ոյժեր արտաբերել, հայկական միջավայրը չարքանակում է անապատ մնալ նրանց արտաբերութեան նպատակաւորութեան տեսակէտից և այդ ոյժերը փայլում են, ինչպէս ասացինք, և անհետանում, կարծես միայն նրա հա-

մար, որ աւելի զգալ տան սոսկալի իրականութիւնը: Ինչ կը լինի ապագայում, մենք չը գիտենք, իսկ մինչև այժմ եղածը ցոյց է տալիս, որ այն ամենը, ինչ որ դուրս է գալիս սովորական շահերի շրջանից, չէ խրախուսվում հայկական միջավայրում և դատապարտված է հազիւ հազ բարձր տալու իր գոյութիւնը:

Այդ բաւական չէ, իւրաքանչիւր նոյն իսկ թոյլ ձգտում դէպի վերածնութիւն այդ ասպարէզներն մէջ իսկոյն անհամապատասխան, չափով աննպատակաւոր բեռակցիւմ է յարուցանում մինչև այդ անտարբեր միջավայրի մէջ: Արքան դէպքեր կարելի է թելել իբրեւ ապացոյց և քանի-քանի մեր հաստատութիւնների ողբալի վիճակը կարող է այդ բանը հաստատել: Բայց թողնենք, դա շատ հեռուն կը տանի մեզ. դառնանք մեզ հետաքրքրող խնդրին:

Մի ժամանակ թուում էր, թէ բնած Բագում, շնորհիւ որոշ պատճառների, իր կարեւորագոյն պահանջը—բնականութեան կողմից դրված է նըպատակաւոր պայմանների մէջ, որոնք կարող էին նրա վերածնութեան հիմք դառնալ: Բայց դուրս եկաւ, որ դրանք վաղածած յոյսեր էին, որոնք չուրով օղբ եղան: Թէև առ այժմ անտարբերական օգտվում է պատրաստված նիւթից, բայց մի քանի պիւններն երևան դարձնում ցոյց տուեց իրերի իսկական վիճակը, որը շատերին կարող էր յայտնի չը լինել: Մօտ է ժամանակը, երբ բնականութեամբ ընդունվին կը դատապարտվի իր նախկին վիճակին, երբ պաթետիկ, շղեր ցնցող տեսարանների աստիճանով և չափով էին որոշում դրամատիկական երկերի արժանաւորութիւնները, իսկ «շարժերով»—կոմեդիաների արժանաւորութիւնը—մի դրութիւն, որը առաջ է գալիս,—երբ գեղարուեստական և գաղափարական տեսակէտը բացակայում է: Պիէտներ, որոնք ընդունված էին իբրեւ գրական անհեթեթութիւններ և արտաբերված էին համարվում այս տարվայ բնականութեան, նորից բնած հանգում, օրինակ, «Մայրամուտ» Սէր Կենդանի, «Բարբառագետ» Թօրօ-Մնէլ: «Բարբառագետ» մասին մենք արդէն անցեալ տարի գրել ենք, մենք փորձել էինք ըստ արժանաւոր գիտնական այդ հոգեբանական անհեթեթութիւնների գնահատելը:

«Մայրամուտ» Սէրը առաջին անգամ էինք տեսնում Բագում բնածի վրա: Անմիտ մեղօդրամների մէջ սա գրուի գործոց կարող է համարվել: Սա մեր շնորհալի կոմիկի պ. Տէր-Դաթիւն խելին, ինչպէս ասում են, զօռ տալով, սրանից աւելի յարմար բան չէ գտնում իր բնեկեցիկի համար: Պ. Տէր-Դաթիւն նորից ապացուցեց մի վաղուց նկատված ճշմարտութիւն, որ երկարամեայ դերասանութիւնը դեռ գրական չէ նոյն իսկ տաղանդաւոր դերասանի ճաշակի և քննական հայեացքի զարգացման, եթէ նա չունի հիմնական մտաւոր պատրաստութիւն:

Մեր բնած ինքը իր վիճակին թողնված, տարածագրութիւն ունի դէպի անկում, որովհետև այդպիսի դէպքում նա ծանրանում է միայն դերասանների վրա, իսկ վերջիններս, սակաւ բացառութեամբ, իրանց դրութեան համապատասխան կրթութիւն չունեն: Բայց Բագում, իբրեւ մի քաղաքում, ուր ամենից շատ հայ ինտելիգենցիա կայ, հարկաւոր էր աւելի ցանկալի դրութիւն. այստեղ կարող էր գոյութիւն ունենալ բնականութեամբ տեղական և վտանգելի ընտրութիւն, որը կրթելով հասարակութիւնը մի և նոյն ժամանակ կը կրթէր, կը ժպէր դերասանների ճաշակը և հնարաւորութիւն իր տար ցանկալի և լուրջ բնական չկօտի առաջ դառն մեղանում. բայց ինչու այդ ընդհատուց, չաղողից:

Քանի-քանի սոյն օրինակ տանջող հարցեր կարելի է տալ հայկական մշակ և անյոյս իրականութեան, որը անապատ է հանդիսանում ամեն մի գեղեցիկ ձեռնարկութեան համար և ոչ միայն բնած վերաբերմամբ:

3. Սաղաթէլեան

ՆԱՄԱԿ ՄՕՍԿԱՅԻՑ

Դեկտեմբերի 18-ին

Կայսերական թատրոնների վարչութիւնը այս տարի մտադիր էր երգչի Բ. Ամիրջանին մի ամբողջ սեզոն պահել երգեցողութեան զարգացում. նախ՝ նորանոր օպերաներ ուսումնասիրել տալու համար (որոնց թուում «Демонъ», «Князь Игорь», «Рыцарь и Людмила», «Песнь торжествующей любви» և այլն), երկրորդ՝ պ. Ամիրջանի երգելու ու խաղում հարթել իտալական չկօտի թերութիւնները: Սակայն հայկ. անցնում են աշխարհային երբեք ամիսները, երբ յանկարծ վարչութիւնը փոխում է իր առաջին դիտաւորութիւնը և նկատելով շնորհալի երգչի երբեք ամիսների միջոցին արած մեծ առաջընթացութիւնը, դեկտեմբերի 2-ին յայտնում է պ. Ամիրջանին, թէ

միւս օրը, դեկտեմբերի 3-ին, նա պիտի դուրս գայ «Песнь торжествующей любви» օպերայում: Նրան յանձնում են Մուցլիյի պատասխանատու գերը:

Վարպետը երբ իջաւ, թատրոնը թնդաց ծափահարութիւններից և դերասաններին շորտհինգ անգամ բնած կանչեցին:

Նոյն օպերան երկրորդ անգամ տրվեց դեկտեմբերի 16-ին և այս անգամ պ. Ամիրջանի աշխարհիւնը աւելի մեծ էր. երկրորդ և երրորդ արարողութիւնների մէջ նրան հարկադրեցին կրկին իր արիաները:

Այժմ, ինչպէս լուում ենք, վարչութիւնը մտադիր է աւելացնել նրա ուսման և յաճախակի մեծ դերեր յանձնել նրան, քանի որ պ. Ամիրջան իր շատ հոգի ձայնով մեծ թատրոնի առաջին բարիտոններից մէկն է, եթէ չասենք աւելին:

ՆԱՄԱԿ ԽՐԱԳԻՐՈՒԹԵԱՆ

Կ. Պօլիս, դեկտեմբերի 9-ին

Բարեկամներս մին, որ կը ընակի յարաւասանս, Պաթումէն նոյեմբերի 25 թվականի նամակաւ մը ինձ յղած է «Մշակ» 126 թվականի մկրտնայ մէկ մասը, որ ըստմանել կըլուի ինձ մը կը պարունակէր իմ անձի նկատմամբ: Ցաւալի է, որ այդ թերթը շատ ուշ, այն է՝ գրեթէ վեց ամիս վերջը, ժամանեց առ իս, ապա թէ ոչ պիտի փութայ անմիջապէս հերքել իմ պատիւն աղարկելու ընտելութիւն ունեցող այդ վատահամբաւ թղթակցութիւնը:

Այժմ պատմեմ եղելութիւնը: Երկու ննջաժամ երիտասարդներ, պատասխարեալք ի հիւանդանոցի, աղջկանց որբանոցի վարժուհի օգնականին հետ սիրային թղթակցութիւն հաստատելու բուռն տենչին վառեալ, ասոնցմէ միայն նամակը ուղարկ առ օգնականին կը բռնուի վարժուհիին և հաստատութեան տնօրէնութեան հաղորդուելով յետ քննութեան կարողանալի հիւանդանոցին: Վարժուհի վարժուհիին վրէժ լուծելու նպատակաւ կը յերկէք այն սև և վատագի զրպարտութիւնը, որոյ արձագանք եղած էր ձեր լրագրողը: Սոյն զրպարտութիւն արձագանք գտաւ. մինչև պարտաբարբառին և հիւանդանոցի հոգաբարձութեան շրջանին մէջ: Իմ պահանջմամբ քննութիւն կը բացուի նոյն իսկ հիւանդանոցի մէջ ի ներկայութեան: Վարժուհի, որ, պատ. անդամոց հոգաբարձութեան, պատրիարքաբարձի զինաւոր պաշտօնէից և հիւանդանոցի տնօրէնութեան ու իւր կցորդներէն. յետ երկար քննութեան կը հաստատուի, թէ այս տարածաշրջանները արտաքին երիտասարդին և նորա ընկերոջ, որ և արտաքինեցաւ ի վերջոյ յերկրած անխիղճ և չարամարմն զրպարտութիւնը: Նիւն Լաւաի կը վկայեն Պատրիարքաբարձի և հիւանդանոցի բոլորական պաշտօնէի ինչորեք պատասխարեալք, ինչպէս հերքուեցաւ նոյն ժամանակ նաև արդ. պատրիարքաբարձի կողմանէ: Իսկ թէ ո՞վ էր այն տղայը, որ երկու տարի առաջ թաղում էր հիւանդանոցի դիմացի պարտէզին մէջ. այդ դիակ կը վերաբերէր հիւանդանոցի մտանալով թաղը—Վաղը—Չէլ—բնակող կնոջ մը անհեթեթ երեխային, որ յետ անհետման թաղում էր անդ իւր հօր ձեռքով ոչ-միտուած լինելուն համար: Զայս կը հաստատեն հիւանդանոցի արձանագրութիւնը և բոլորական պաշտօնէի ինչորեք:

Զեր թղթակցին հանդէպ կրկնած արդար զայրոյթ և ցատուհն, նկատելով որ քնառ ուշադրութեան առնուլ չէ ուղեր պատրիարքաբարձի իշխանութեան իրենց, նորա պաշտօնէից և հիւանդանոցի պատ. հոգաբարձութեան անդամոց ու պաշտօնէից միահաղոյն ներկայութեան կատարած քննութեան և դատաստանի ելքն ու արդիւնը, թերևս խորհելով, որ այսքան բաղժամիւն անձինք պարկեշտ և պատուաւոր քաղաքացիներ, անկախ իրենց դիրքից ու հարստութեամբ, արդարաւարտութեամբ և պարկեշտութեամբ հոգեւորաւ և իրենց ազնիւ գործերով ապացուցեալ անձեր են, և եթէ այսպէս չլինէր, արդիւն ծագողագիրն ու ամենակարեւոր և ամենափափուկ պաշտօններ չէր յանձնել անոնց: Գալով ինձ, համեստ ընտանեաց մի գաւալ, իմ աշխատութեան և ինքնօրէնութեամբ զարգացած, բժշկական դիրք մը ստեղծած ինձ համար, կը ջանամ իմօքսան իմ գործունէութեամբ և պարկեշտութեամբ օգտակար ըլլալ այն մարդասիրական հաստատութեան, որոյ մէջ պաշտօն ընդունած եմ և աղբիւ, որոյ յետին անդամն եմ և սակայն հրատարակեալ զրպարտութիւնէն վշտանալ և վիրաւոր կը փութեմ ձեզ յայտնել իմ դատն վրա ու ցատու և կը ինչորեք ձեր անկողնակալութիւնէն, հիւրընկալել ձեր լրագրին մէջ սոյն հերքմագիր, իբրեւ բողոք արդարութեան և ճշմարտութեան ընդդէմ անարդարաց պատուոյ, որ սիրելի է ինձ և թանկագին ըստ դամեն ինչ յաշխարհի:

Տօք. Մովսիսեան

Այսօր հրատարակում ենք «Մշակ» 1898 թվականի վերջին համարը. եկող տարվայ առաջին համարը լոյս կը տեսնի յունվարի 1-ին, ուրբաթ օրը: Այդ համարը կուղարկենք միայն նրանց, որոնք բաժանորդ են գրվել մեր լրագրին:

Մեզ հաղորդում են, որ ամուսնալուծութեան դէպքերի քաղաքական պատճառով, հարց է յարուցված ժողովել նիւթեր այդ հարցի վերաբերութեամբ: Կ. Պօլիս պատրիարք Օրմանեան դիմել է Վեհափառ Վաթիկանին խնդրելով, որ արվեն բարձր հոգևոր իշխանութեան կողմից ընդհանուր հրահանգներ ղեկավարելու համար այն դէպքերում, երբ ամուսնալուծութեան հարց է ծագում: Սակայն հոգևոր իշխանութիւնը հազիւ թէ շուտով կազմի այդպիսի հրահանգներ, որովհետև նա դեռ չէ ուսումնասիրել գործնականութեան մէջ եղած դէպքերը: Անհրաժեշտ է կազմել յատուկ յանձնաժողով, բաղկացած հետու և հեղինակաւոր անձերից, և լուրջ կերպով ձեռնարկ խնդրել:

Քիֆլիսի նահանգապետը հաղորդեց քաղաքազինին, թէ Վովկասի կառավարչապետը յանձնարարել է իրան յայտնել Քիֆլիսի քաղաքային դոմային, որ ձիաբաշի մասին Քիֆլիս քաղաքի բնիկական Անտիոն ընկերութեան հետ կապած պայմանագրի մասին դոմայի կայացրած որոշումը, որ ներկայացրված էր կառավարչապետի հաստատութեանը, յետաձգվում է մինչև նոր կարգադրութիւն:

Դեկտեմբերի 28-ին լրացաւ կառավարչապետի խորհրդի անդամ Նիկոլայ Իվանովիչ Պրիբիլի պետական ծառայողի միջոցով: Գաղտնի խորհրդական Պրիբիլ 1848 թվ. ծառայում է Վովկասում: Նա մի քանի անգամ եղել է և կառավարութեան ներկայացուցիչը կաթողիկոսական ինտրութիւնների ժամանակ: Քօբեկեանի օրը Պրիբիլի տուն դնացին շնորհաւորելու յօբեկեանի Վովկասի կառավարչապետ գնեքաւաղիւտանու իշխան Փոլիցին, կառավարչապետի խորհրդի անդամները և քաղաքային բարձրատիման անձինք:

Տեղական լրագրից բացվեց մէկում հաղորդված այն լուրը, թէ իբր Յովնանեան-Մարտիան զարգաց շուտով բացվելու է, ինչպէս մեզ հաղորդում են ստոյգ աղբիւրից, ոչ մի հիմք չունի:

Կարսի յաջորդը, «Ноб. Обозр.» լրագրի խօսքով, մտադրութիւն ունի միջնորդել երկրագործութեան միջնորդութեան մօտ Կարսում շորտ դատարանեան արհեստագործական դիւղանտեսական դպրոց բանալու մասին: Կարսում արդէն եկեղեցական ծախսով կառուցված է 14 սենեակներից բաղկացած մի շինութիւն՝ իր բոլոր յարմարութիւններով: Յաջորդաբար տարեկան 8000 թ. կը տայ դպրոցը պահելու համար:

Նոյն լրագրից հաղորդում է, որ Վեհափառ Վաթիկանը Կարսի յաջորդին ուղարկեց Պետերբուրգ՝ դատարանի միջոցով դպրոցական այն կալուածները յետ պահանջելու նպատակով, որոնք սխալմամբ վերագրված էին նախկին հայոց ծխական դպրոցներին:

Փինանների միջնորդութեան հաստատութեանն է առաջարկված «Փօթի-Չիտուրեան» մարզանէլի արդիւնաբերական ընկերութեան նախագիծը:

Ասխաբայի նոր հիմնվող նահանգական դատարանի բացումը տեղի կունենայ եկող տարվայ մայիսի 1-ին: Դրա հետ միասին իրանց գործունէութիւնը կը սկսեն Անդրկասպեան շրջանի հաշտարար դատարանները:

Մեզ դրում են Շամախուց, որ տեղական կօնսիստօրիայի նոր նախանշում Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսիսեան արդէն պայման կապեց մի փաստաբանի հետ, որ յանձն է առել վարել կօնսիստօրիայի դատը Վովկասի ուսումնարանական շրջանի դէմ եկեղեցապատկան շինութիւնների մասին: Այդ շինութիւնները, ինչպէս յայտնի է, գրաւվել են իրենցիցայ կողմից, իբրեւ եկեղեցական-ծխական դպրոցներին պատկանող:

Նոր լոյս տեսան հայոց հրատարակչական ընկերութեան երկու նոր հրատարակութիւնները. 1) Փրանսուա Կօպլի «Հանրէտ» վէպը, որ թարգմանել է Ֆրանսերէնից Ռ. Խ., գիրը 35 կօպէկ. 2) Վալտեր Սկոտի «Վոլդներ լորդը»:



պօղան, ոտանաւոր թաղամասերէն անդրա-  
կան բնագոյրից 8. Միջոցաւանցի: Գինը 1 բութ-  
ը: Ընկերութիւնը այս 1898 թիւ ընթացքում  
հրատարակել է ընդամենը 13 գիրք:

Այս օրերս, «Новості» լրագրի խօսքով, Ման-  
թաշեանի Բագրուի նաւթային արդիւնաբերու-  
թիւնը գնել են Պետերբուրգի դրամատէրերը  
22 միլիոն բութով: Այդ արդիւնաբերութիւնը  
չանդորդելու համար ակցիոնեական ընկերու-  
թիւն է հիմնուում 16 միլիոն բութի դրամադրով:

Մենք ստացանք գերմաներէն մի բրօշուր, որ  
արտատպւած է գերմանական «Centralblatt  
für praktische Augenheilkunde» հանդիսից,  
դա մի դասախօսութիւն է, որ կարդացել է  
Բերլինում դոքտոր Յ. Թամմաչով այս տարվայ  
յուլիսին դիֆթերիաի բժշկութեան նոր եղանա-  
կի մասին:

«Тифл. Листок» լրագրին հաղորդում են, որ  
եկող յունկար ամսին հաղորդակցութեան ճանա-  
պարհները մինիստրութեան մէջ կը քննվի Ե-  
րևանից մինչև Զուլֆա երկաթուղիական գիծ  
անցկացնելու նախագիծը:

Մեղրիից մեզ գրում են. «Անցեալներում հա-  
ղորդել էինք «Մշակի» ընթերցողներին, որ Ղա-  
փանի մայրն գտնուող բոլոր պղնձահանքերի  
տէրերը մտադիր են վաճառել իրանց հանքերը  
անգլիական ընկերութեան: Հաստատ աղբիւրից  
տեղեկացանք, որ հանքատէրերից առայժմ միայն  
Կուստուրովն է վաճառել մի ընկերութեան  
600,000 բութով: Ինչպէս ասում են, Կուստու-  
րով վաճառած հանքերի մէջ է մտնում և Մեղ-  
րի-Ֆինէյ-մայրում Հաղարակի գիւղի մօտ գտնվող  
հանքը, որը տարինից ի վեր չէր շահագործ-  
վում: Ասում են, որ Կուստուրով իր վաճառած  
հանքերի համար կանխադէտ 25,000 բ. դրամա-  
կան է ստացել: Միւս հանքատէրերի վերաբեր-  
մամբ որոշ լուր չը կայ: Ներկայումս պղնձա-  
հանքերում գործը կատարելապէս կանգ է ա-  
ռել: Նախկին կենդանութեան տեղ մեռելութիւն  
է տիրում: Երջակայ ժողովրդի մեծամասնութիւ-  
նը այդտեղ էր աշխատել՝ իր գոյութիւնը  
պահպանելու համար, այժմ հարկաւոր անհատ-  
ներ, բանուոր դասակարգից տնտեսական զանա-  
զան հանգամանքների չնորհիւ պանդխտութեան  
ցուպը ձեռք առած դիմում են դէպի Բագու,  
գործ որոնելու: Երկար չի տևի, որ օտար կա-  
պիտալիստները մուտք կը գործեն մեր դաւառը  
և տեղի բնական հարստութիւնները կը շահա-  
գործեն աւելի շահաւէտ, արդիւնաւէտ և բա-  
ցիտալ կերպով, քան մեր հայ և յոյն հանքա-  
տէրերը, որ իրանց անընդունակութեան և մա-  
սամբ սուղ միջոցների չնորհիւ գործը յանձնում  
են օտարներին»:

Վերին-Արմուրի մեզ հաղորդում են, որ  
այս տարի խաղողի բերքը շատ սահմանափակ  
էր անցեալ ձմեռվայ ցրտերից պատճառած վը-  
նասների չնորհիւ: Վարդը միայն կարողացան  
այնքան զարգանալ, որ առաջիկայ 1899 թիւին  
կարող են նորից վերականգնել իրանց ար-  
դիւնաբերութիւնը: Մրցատու ծառերը լաւ էին  
զարգացել և ստացվեց շատ միւր: Ենթադրու-  
մով թիւինը այս տարի անցաւ անշուք՝ ընտիր ցե-  
լիւար օճեր մահելու չնորհիւ: Սերմ պատրաս-  
տում են տեղական չերամպայաններ և ծախում  
են 50—60 կոպէկով: Բոժոժը ծախվեց 16—17  
բութով:

ԱՂՆԱՍԻՑ մեզ գրում են. «Թէ որ աստիճան  
հակառակական պայմանների է ենթարկված մեր  
քաղաքը, երևում է նրանից, որ ամբողջ քաղա-  
քում չը կայ մի հատ հասարակական բաղանիք,  
որ կարելի լինէր մաքրել ծառայելու: Եւ չը կայ  
մի անհատ, որ շինէր բաղանիքներ, որի գոյու-  
թիւնը համ շահաւէտ կը լինէր իր համար, համ  
էլ կադատէ 13,000 ընկերների կեղտերից:  
Բաղանիքների բացակայութիւնը անպատճառ  
և անօթիւր է տղաների համար: Իսկ մեր  
քաղաքային ինքնավարութիւնը: Տարաբաղա-  
բար այդ հիմնաբերութիւնը ոչ թէ հասարակական  
է, այլ, ինչպէս երևում է, լոկ իր պաշտօնեա-  
ներին ուժիկներ տալու համար է հիմնված: Բա-  
ղաքը հեշտութեամբ կարող է շինել քաղաքային  
բաղանիքներ, որ պահանջում է համեմատաբար  
բիշ ծախս: Դրանով կը շատանային քաղաքային  
եկամուտները: Սակայն մեր դուռն իր ղեկա-  
վարներով անպարտ նիւնում է ու յորանջում»:

### ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՐԻՊԱՅԻՄ

Եւրոպան արդէն տօնից նոր, 1899 տարին:  
Լրագիրները արդէն սկսել են իրանց սովորա-

կան եղբակցութիւններն անել անցած 1898  
տարվայ մասին: Բայց Կրեմլի աղատութիւնից  
և օգոստոսի 12-ի ուսաց յիշատակագրից, մը-  
լիթարական ուրիշ կէտեր չեն գտնում: Անդրան  
կորցրեց իր ամենամեծ պետական մարդուն—  
Գլադստօնին և նրա մահվամբ աղատմիտ կու-  
սակցութիւնը ևս թուլացաւ և, յամենայն դէպս,  
այդ կուսակցութեան նախկին քաղաքական ա-  
ւանդութիւնները անհետացան անպարելից: Անդ-  
րան կառավարվում է պահպանողական-ուսի-  
նիստ կուսակցութեան ձեռքով, որը բաժանվել  
է երկու ճիւղի. մի ճիւղը՝ Չիքսթէնի ղեկավա-  
րութեամբ՝ սաստիկ պաշտպան է իմպերիալիզմի,  
այն է նախնական սկզբունքներն արտաքին քա-  
ղաքականութեան մէջ, և որովհետեւ այդ ուղիու-  
թեան հետեւում են շատ անգլիացիներ, ուստի և  
Սօլդիւրին ստիպվեց արկածախնդիր քաղաքա-  
կանութեան մէջ մտնել, սպառնական դիրք բռն-  
նելով մի քանի պետութիւնների վերաբերմամբ:  
Այդ սպառնական քաղաքականութեան արդիւն-  
քնն այն եղաւ, որ Անդրան Չիքսթէնի հետ,  
Աֆրիկայում այնպիսի գործողութիւններ սկսեց,  
որոնք զրոգեցին ուրիշ պետութիւններին, զը-  
խաւորապէս Պրանսիային, Փաշտայի հարցում,  
և քիչ էր մնում, որ պատերազմ սկսվի այդ եր-  
կու պետութիւնների մէջ և դեռ այսօր էլ այդ  
վտանգը չէ անցած: Այդ հանգամանքներն ստի-  
պեցին Անդրանի սաստիկ կերպով սպառնալիցի-  
սկսեց սպառնալիցի և՛ Գերմանիան, և՛ Պրան-  
սիան և նոյն իսկ մահամերձ թիւրբիան:

Ոչ մի պետութեան մէջ այնպիսի մի ու-  
րախ երևոյթ տեղի չունեցաւ, որ ստիպել  
տիրութեամբ բաժանվելու 1898 տարուց: Աւստ-  
րո-Ունգարիան տարաբերվում և ալեկոծվում էր  
ազգայնական տարածաշրջութիւններից ու ցեղա-  
կան լինումներից: Նրա արևոր, վշտահար  
վեհաշնորհ մի նոր, սարսափելի վշտի ենթարկ-  
վեց կայսրուհու սպանութեամբ, իր կեանքի վեր-  
ջադրման Պրանց-Յովսէֆ կայսրը երջանկութիւն  
չունեցաւ հաշտութիւն, սէր և համեղաշնորհութիւն  
հաստատելու իր բաղձանցել, բաղձալեզու ժողո-  
վուրդների մէջ:

Պրանսիան տանջվում էր մի ուրիշ ցաւով. անար-  
դարութիւնը կատարի կռիւ էր մղում արդարու-  
թեան և օրինապահութեան դէմ, և թուլացած  
ներքին երկպառակութիւններով, նա չը կարու-  
ղացաւ պաշտպանել իր շահերը, իրաւունքները  
արտաքին քաղաքականութեան ասպարեղում ու  
ստիպվեց խնայարժէք Անգլիայի առաջ, ազգային  
ինքնասիրութեան հացքած այդ վերադարձը  
դառնութեամբ լցրեց նրա սիրտը:

Գերմանիան, թէև հղորակող Թիւրքիայի  
հետ կապած իր բարեկամութեամբ և արտաու-  
րեց քրիստոնէական քաղաքակրթութեան համ-  
բաւ՝ իրան պաշտպան և Տովնաւոր հրատա-  
րակելով հարկը հաղարաւոր ամենը քրիստո-  
նէական արևել թափող մուսուլմաններին, բայց  
նա ևս Եւրոպայում, դանիացիների դէմ յարու-  
ցած իր հաշտմանընդդէմ, անհրաժեշտութեան և ան-  
արդարութեան այնպիսի ասպարեցներ տուեց, ու-  
րոնք մեծ արատ պէտք է լինեն գերմանական  
անուան համար համաշխարհային պատմութեան  
մէջ: Իտալիայում նոյնպէս ժողովրդական ծանր  
աղէկներ եղան—հացի լինողութիւն, անգործու-  
թիւն, բացի դրանից, իտալական կառավարու-  
թեան նախաձեռնութեամբ գումարված կոմիտե-  
րէնցիան անարխիստների դէմ կատարեալ անա-  
լիտութեան մատուցեց:

Մի խօսքով, եւրոպական գրեթէ ոչ մի երկիր  
անցած 1898 տարվայ ընթացքում չունեցաւ  
այնքան երջանիկ և աջողակ բոլորներ, որ դոնէ  
մի անկեղծ «հողոցով» ճանապարհ դնէր նրան  
դէպի յաւիտենականութեան դիմելու...

### ԹԻՒՐԿԱՎԱՆ ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պօլսից հաղորդում են Ս. С. Петербургіа  
Вѣдомості» լրագրին.

«Այն ժամանակ, երբ ամբողջ քաղաքա-  
կրթ աշխարհը պատրաստվում է ընդունել  
ուսաց Յարի մեծ առաջարկութիւնը, Թիւր-  
քիւն կարծէր թէ արշաւանքի է պատրաստ-  
վում: Գրեթէ ամեն որ Եւրոպ-Ֆիոսկից իրադէ-  
ներ են գուրս գալիս ներշնչված ոչ խաղաղասէր  
ողով: Այդ իրադէները մէկով փաղիւհէր հրա-  
մայում է ուղղեմութեան մեծ պաշար պատ-  
րաստել տալ Կրուպկի գործարանում. երկրոր-  
դով հրամայում է կարգի բերել թիւրքաց նա-  
ստորմը, որը, թէև վատ եղանակի հանդիպելով,  
կարող է ընկզմվել. երրորդ իրադէն հրամայում  
է պետական խորհրդին կազմակերպել հեծեա-  
զօրքի երկու նոր դիզեր չեքէնքերից և ալբանա-  
ցիներից, չը նայելով որ փող չը կայ: Այդ ան-  
փողութիւնը ստիպում է այժմ Բ. Դուան դիմել

անօրինակ միջոցներ: Այլ-Բիֆատ փաշայի ծը-  
րագրով վճռված է թիւրքաց պաշտօնեաների  
թիւը քսան և հինգ տոկոսի չափ պակասեցնելու  
երկրի համար ոչ մի վնաս չէր լինի, եթէ այդ  
թիւը պակասեցնելը նոյն իսկ յիսուն տոկոսով  
թիւրքաց ամեն մի մինիստրութիւն լի է որոշ  
տեղ և աշխատութիւն չունեցող պաշտօնեաներով:

Գիտար է հաւատալ, բայց իրողութիւն է,  
որ թիւրքաց պաշտօնեաներից շատերը չեն  
գրել մի հատ թուղթ իրանց երկարամեայ ծա-  
ռայութեան ընթացքում. շատերը նրանցից նոյն  
իսկ չեն արտադրել մի հատ թուղթ, իսկ շա-  
տերը գալիս են մինիստրութիւն մի քանի ա-  
միսը մի անգամ, երբ կարգում են լրագիրնե-  
րում, թէ այս ինչ օրը մինիստրութեան մէջ  
ուժիկ պէտք է տան: Եթէ Այլ-Բիֆատ փաշան  
կարողանայ արժատախիլ անել՝ ձրիակներին  
պահելու սովորութիւնը, նա ոչ միայն մեծ օ-  
գուտ կը տալ կառավարութեան, այլ և բարի  
գործ կը կատարի. ստիպելով թիւրքաց երիտա-  
ւարդութեան ձեռք բերել իր հացը աշխատու-  
թեամբ և ոչ զանազան խնամքների օգնութեամբ:  
Պրանսիան մինիստրութեան մի այլ խորա-  
մանկ ծրագրով—վիճակախաղերի միջոցով—պե-  
տական դատարկ դաժնամարմն լցվում է մեծ  
զուսմաներով. սակայն դժուար թէ եկամտի  
այդ երկու նոր աղբիւրները (պաշտօնեաների  
թիւը պակասեցնել և վիճակախաղերը) կարու-  
ղանան ծածկել նոր հաւատարմ և հեծեալօրը  
կազմելու ծախքերը. պէտք կը լինի դարձեալ  
դիմել փոխառութեան...»:

### ՆԱՄԱՍԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Բերլին, դեկտեմբերի 27-ին  
Իր ժամանակին հեռագիրը հաղորդեց որ անդ-  
լիացի քիմիկոս պրոֆէսոր Բալեյք օդի մէջ զը-  
տաւ նոր էլեմենտների: Անցեալ չաքա՛մ ինչեւ  
պրոֆէսորը Բերլին գալով, քիմիական ընկերու-  
թեան նիստում, ընկերութեան անդամների և  
Բերլինի ու գերմանական ուրիշ քաղաքներից  
յատկապէս դրա համար եկած՝ ճիւղ դիտութիւն-  
ները հուշակոթիւնը այնպիսի ներկայացուցիչների  
առաջ, ինչպէս են Վինքլեման, Լիբերման, Լան-  
տուր Ֆիշեր, Օտտվար, Արէդ, Քիտթ, Վիլսոն,  
կարգաց մի փորձնական դասախօսութիւն իր  
արած գիտելիքի մասին: Նիւթը հետեւեալն է.

Յայտնի է, որ մինչև նոր էլեմենտների գիտը,  
այն կարծիքն էր տիրում, թէ օդը բաղկացած է  
ջրային գոլորշիներից, ածխածնի, թթուած-  
նից և բորակածնից:

Բալեյքի պաշտօնակից մի ուրիշ անգլիացի  
քիմիկոս լորդ Բալեյք Նիկտոն էր, որ օդից  
ստացած բորակածնի կշիռը աւելի ծանր է, քան  
քիմիական ուրիշ բաղադրութիւններից առաջ  
բերած բորակածնի կշիռը: Այդ երևոյթը, ինչ որ  
պ. դասախօսը ինչն էլ մի քանի անգամ շեշտեց,  
մղում է նրան դէպի իր գիտերը:

Նիւթարեւելով որ օդի բորակածնը խառն կարող  
է լինել և ուրիշ տարրերի հետ, Բալեյք բաց է  
թողնում մինչև այդ ժամանակվայ ձևով օդից  
ստացվող բորակածնի մի հոսանք հրաշքի դարձ-  
րած մաքնեղաւ թիթեղի վրա, որով բորակա-  
ծնը միանում է մաքնեղաւի հետ, իսկ տակը  
մնում է ուրիշ նիւթ, որ ոչ մի ուրիշ տարրի  
հետ չէ միանում, դրա համար և կոչում են  
ար. դ. օն, ընդունելով նրան իբր մի նոր էլեմենտ:  
Բայց արգօնը իր կշիռով ոչ մի յարմար տեղ չէր  
գտնում, քիմիական էլեմենտների բնական սիս-  
տեմի մէջ: \*)

Նիւթարեւելով որ արգօնը ինքը մի պարզ էլե-  
մենտ չէ, Բալեյք նրան նոր վերլուծութեան է  
ենթարկում, ծծմբային թիթու և ուրիշ հա-  
զուագիտ հանքային նիւթերով գտնում է երկ-  
րորդ նոր էլեմենտ՝ «Նելիում», որի գոյութիւնն  
արեւակի վրա, դեռ քանի տարի անալ էր յայտ-  
նի, չնորհիւ լուսաւորութեան (spektrale analyse):  
Հելիումի ատոմական կշիռը 2 է, արգօնինը՝  
20: Եւ յիշատի, երկուսն էլ պարբերական սիս-  
տեմի մէջ տեղ են գտնում: Բայց այդ սիստեմի  
ուսումնասիրութիւնը այն եղբակցութիւնն է  
տալիս, որ նման էլեմենտները առնուառէն երեք-  
երեք են խմբվում: Հետեւեալս և մի ուրիշ էլե-  
մենտ պէտք է ենթադրել արգօնի և Նելիումի  
մէջ: Այդ տեղը այն ժամանակ է բացվում, երբ  
կրկնապատկում է արգօնի և Նելիումի ատոմա-  
կան կշիռը, իսկ միջին աղաւտ տեղը 20 է: Բայ-  
ցած տեղի նոր էլեմենտ գտնելու համար սկսում  
են նոր հետաւորութիւններ. Բալեյք իր ասիս-  
տնտի հետ, իսկ Պրանսիայում Բերլինը, ու-  
րիւն Բալեյք մի լրար հեղուկ արգօն էր ուղար-

\*) Ինչպէս յայտնի է, ըստ Պետերբուրգի կայսերա-  
կան համալսարանի պրոֆէսոր Մեդելեւսի, կազմած  
սիստեմի, էլեմենտների յատկութիւնները նրանց կշիռ  
պարբերական փոփոխութեան են:

կել, շարունակում են հետազոտել նաև զանա-  
զան հանքեր և հանքային ջրեր, բայց անհե-  
տեանը: Վերջապէս 4 ամսվայ աշխատանքից  
յետոյ այն ժամանակ է միայն արդիւնում, երբ  
կարելի է լինում 18 լիտր արգօն և բաւակա-  
նաչափ օդ հեղուկ դրութեան մէջ ձեռք բերել:  
Եւ փոխանակ մի էլեմենտի՝ Բալեյք և Տրալեր  
մի շարքվայ ընթացքում գտնում են մի քանի  
էլեմենտներ՝ կրի պտ օնի օն, մետարգօն և  
քսենտօն: Այս էլեմենտները բաժանվում են ար-  
գօնից գտնան միջոցով: Այսպէս, օրինակ, նիտ-  
ն (արգօն) մետարգօն արգօնից բաժանելու հա-  
մար. յարմարեցրած խողովակների մէջ գորդ-  
չիացնում են նրանց և հեղուկ օդի միջով անց-  
կացրած անօթում կրկին սառեցնում (յայտնի  
ստիւժանով)՝ զուտ արգօնը հեղուկ դրութեամբ  
է հեռացվում, մնում է տակը մի կարծր (մե-  
տարգօն) և մի դաղանման (նիտ) մարմին: Մի  
սրտակի մէջ գոլորշիանման մարմինն են հաւա-  
րում, իսկ միւսում կարծր մետարգօն է գորդ-  
չիացած: Այսպիսով արդէն յարմար է նրանց  
հետազոտել և քնորոշել: Նոր էլեմենտները ու-  
րոշվում են միմեանցից տարբեր խորութեամբ,  
սպեկտրում ցոյց տուող գծի գոյնով և նրանց  
երկարութեամբ: Բայց դրանից շատ բնորոշ է  
նրանց յարաբերութիւնը դէպի օդից զուրկ  
սրտակները, որոնց մէջ ցոյց են տալիս էլի-  
տարբեր գոյներ, երբ միմեան մէջ երկարա-  
կան հասանքով ներս է թողնվում լույսը:

Պրանսիայի գիտնական Բերլինը մասնացոյց  
է արել այն բանի վրա, որ նոր գտած կրկա-  
տօնը, նոյն գոյնը և երկարութիւնը է ցոյց տա-  
լիս սպեկտրում, ինչ որ հիւսիսայգը (Nordlicht):  
Դրանով բացատրում է, որ նոր բաղկացուցիչ  
մասի այդ յատկութեան պէտք է վերաբերել և  
հիւսիսայգի երևոյթը:

Առ այժմ այսքան է յայտնի նոր էլեմենտների  
մասին: Նոյն իսկ բնական սիստեմում, պ. Բալ-  
եյքին աշղիղել էր մի քանիսին միայն պատշա-  
ճաւոր տեղ տալ: Նրանց մինչև այժմ օդի մէջ  
անցյալ մնալը, բացատրվում է իրանց անտար-  
բերութեամբ. դրանցից ոչ մէկը ուրիշ էլեմենտնե-  
րի հետ քիմիական բաղադրութիւնն չէ կազմում:  
Բալեյքի աշղիղութեան շատ նպատակ է նախ օդի  
և դաղային մարմինների հեղուկ դարձնելու վեր-  
ջին ժամանակների աշղ փորձերը: Ինչպէս տե-  
սանք, նա համարեա հեղուկ օդի և արգօնի հետ  
միայն գործ ունէր: Ներկայ եղողներին մեծ  
հիացմունք էր պատճառել և նրա հանձնարել  
հետութեամբ պատրաստած երկարական գործի-  
ները:

Դեռ սրանից երեք տարի առաջ արգօնի գիւ-  
տը յայտնվելիս, ամենքը զարմացել էին, քանի  
որ այդ գիւտը անվում էր այնքան անգամ ու-  
սումնասիրութեան և վերլուծութեան ուղարկու-  
ված օդի մէջ:

Երկրաստոր գիտնականի քանի մի տարվայ կա-  
տարած մի շարք փորձերով մի նոր գիտնական  
դարադրուի է կազմվում, որով յեղաշրջում է  
մարդուն յիշկապածով օդային ուղիւնստի մա-  
սին եղան հակադրողութիւնը:

### 8. Յովաննիսեան

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Միւլիթէի «Allg. Zeitung» լրագրի Կ. Պօլ-  
սի թղթակցի ասելով յոյթթիւրքական պատե-  
րազմից յետոյ ժամեկական աշխարհն անդադար  
յուզման մէջ է գտնվում, և վերոյիշեալ պատե-  
րազմն ստիպեց իսլամի բոլոր հատապետներն-  
րին կրկին միանալ խալիֆի շուրջը: Շարժումը  
տարածվում է ամենահեռաւոր չրքաններում:  
Յայտնի է, որ սուլթանը Հնդկաստանից անգլի-  
զուսաներ ստացաւ. զօրքերին ուժիկ տալու հա-  
մար պատերազմի ժամանակ. և մինչև անգամ  
նեղքների սուլթանները Աֆրիկայում ուղարկում  
էին նրան այն ժամանակ իրանց լուսան: Այժմ  
Բատալիայից հաղորդում են, որ Եւրոպ կղզու-  
բազմութիւն ժամանակաւ ընտանիքների զիւսա-  
ւորները վճռել են, ի նշան այն բանի, որ թէ  
ներքուստ և թէ արտաքուստ պատկանում են  
իսլամին, կրթել իրանց դաւաններին Կ. Պօլսում:  
Նրանք ղիմեցին սուլթանին, խնդրելով, որ ի-  
րանց զաւակներն ընդունվեն Կ. Պօլսի դպրոց-  
ներում: Սուլթանը բարեհաճութեամբ ընդունեց  
այդ խնդրերը:

—Պարսկից հեռագրում են ղեկտեմբերի 23-ից,  
որ Կայսերին դատարանի նախագահին հրամա-  
նագրված է հարցաքննել Իրէֆիւսին և հարցա-  
քննութեան արդիւնքը հեռագրով հաղորդել վըճ-  
նալին: Կայսերին անտանի դատաւիճիւր կարտասան-  
վի յունկարի և Իրէֆիւսի կր վերադառնալ ար-  
դարացած: Վճռվելով ատենալը, դեռ երկու շա-  
բաթ առաջ, որոշել էր հրատարակել հրամանա-  
գիր Իրէֆիւսին վերադարձնելու մասին, բայց  
երբ արդարադատութեան մինիստրն իմացաւ այդ  
որոշումը, նա բողոքեց, յայտնելով, թէ հէնց որ  
վերադարձի մասին լուրը տարածվի, յուզումնե-  
րներ կը սկսվեն և կառավարութիւն



საქართველოს ყველაზე დიდი...  
— საერთაშორისო...  
— ჟურნალ...  
«Daily Mail»...

ბიუროს ცნობები

საქართველოს ყველაზე დიდი...  
— საერთაშორისო...  
— ჟურნალ...  
«Daily Mail»...

„სტუდია“ ჯგუფის ცნობები

ბიუროს ცნობები

ბიუროს ცნობები...  
— საერთაშორისო...  
— ჟურნალ...  
«Daily Mail»...

ბიუროს ცნობები...  
— საერთაშორისო...  
— ჟურნალ...  
«Daily Mail»...

ბიუროს ცნობები...  
— საერთაშორისო...  
— ჟურნალ...  
«Daily Mail»...

ბიუროს ცნობები...  
— საერთაშორისო...  
— ჟურნალ...  
«Daily Mail»...

ბიუროს ცნობები...  
— საერთაშორისო...  
— ჟურნალ...  
«Daily Mail»...

ბიუროს ცნობები...  
— საერთაშორისო...  
— ჟურნალ...  
«Daily Mail»...

ბიუროს ცნობები...  
— საერთაშორისო...  
— ჟურნალ...  
«Daily Mail»...

ბიუროს ცნობები...  
— საერთაშორისო...  
— ჟურნალ...  
«Daily Mail»...

ბიუროს ცნობები...  
— საერთაშორისო...  
— ჟურნალ...  
«Daily Mail»...

ბიუროს ცნობები...  
— საერთაშორისო...  
— ჟურნალ...  
«Daily Mail»...

ბიუროს ცნობები...  
— საერთაშორისო...  
— ჟურნალ...  
«Daily Mail»...

ბიუროს ცნობები...  
— საერთაშორისო...  
— ჟურნალ...  
«Daily Mail»...

ბიუროს ცნობები...  
— საერთაშორისო...  
— ჟურნალ...  
«Daily Mail»...

ბიუროს ცნობები...  
— საერთაშორისო...  
— ჟურნალ...  
«Daily Mail»...

ბიუროს ცნობები...  
— საერთაშორისო...  
— ჟურნალ...  
«Daily Mail»...

ბიუროს ცნობები...  
— საერთაშორისო...  
— ჟურნალ...  
«Daily Mail»...

ბიუროს ცნობები...  
— საერთაშორისო...  
— ჟურნალ...  
«Daily Mail»...

ბიუროს ცნობები...  
— საერთაშორისო...  
— ჟურნალ...  
«Daily Mail»...

ბიუროს ცნობები...  
— საერთაშორისო...  
— ჟურნალ...  
«Daily Mail»...















